«30» դեկտեմբեր 2021թ.

ք. Երևան, Ս. Դավիթ 87Ա

ՈՐՈՇՈՒՄ Ն 3645 Ա

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս քննարկելով ֆիզիկական անձ Ալբերտ Եղիազարյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 60769/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ Ալբերտ Եղիազարյանի (Հասցե՝ Լոռու մարզ, գ. Ջրաշեն 1փ. 15 նրբ. տ. 8/1 ՀՎՀՀ՝ 67054772, Անձնագիր՝ AR0256204) չկատարված հարկային պարտավորությունը 01.11.2021 թվականի դրությամբ կազմել է 403.209 դրամ, որից հարկ՝ 391.921 դրամ, տույժ՝ 11.287 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով 08.12.2021թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկությունների համաձայն ֆիզիկական անձի կողմից 28.07.2021թ. ԵԱՏՄ անդամ պետությունից ՀՀ տարածք է ներմուծվել ապրանք որը գերազանցել է ՀՀ կառավարության 13.02.2020թ. «ՀՀ օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակներն ու ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու պարտավորության վերաբերյալ» թիվ 171-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված չափաքանակները:

Ֆիզիկական անձը ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 59-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ պարտավոր է ՀՀ կառավարության 13.02.2020թ. թիվ 171-Ն որոշմամբ սահմանված չափաքանակը գերազանցող մասի համար Օրենսգրքի 77-րդ և 78-րդ հոդվածների համաձայն՝ հարկային մարմին ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիր և վճարել արդյունքում առաջացող ավելացված արժեքի հարկը՝ մինչև ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի և 61-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետությունից ՀՀ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքը, արդյունքում Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ԱԱՀ-ն կհաշվարկվի 20 տոկոս դրույքաչափով:

Ֆիզիկական անձ Ալբերտ Եղիազարյանի կողմից իրականացված վերը նշված գործարքի մասով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացվել ներմուծման հարկային հայտարարագիր և չի կատարվել հարկերի վճարումը:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 403.209 դրամ, որից հարկ՝ 391.921 դրամ, տույժ՝ 11.287 դրամ, որն առաջացել է ֆիզիկական անձի կողմից կատարած ներմուծման գործարքի արդյունքում, ինչպես նաև հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 64-րդ, 66-րդ կետերով, 398 հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 59, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ֆիզիկական անձ Ալբերտ Եղիազարյանից գանձել 403.209 ՀՀ դրամ պարտավորության գումար համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

01.11.2021թ-ի դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	ԱԱՀ	20.08.2021թ	391.921	11.287		403.209	պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել ֆիզիկական անձին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին, կամ վերադաս վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

Կատարող՝ ՀՀ ՊԵԿ ԻՎ ՀԳՊԿԱ բաժին
գլխավոր մասնագետ Կարեն Հովհաննիսյան
հեռ՝ 011-54 91 91 (9128)

Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2019թ. հուլիսի 18-ի թիվ 480-Լ հրամանի
Ձև

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 60769/2021/ՀՈՒԿ4/Ա

ք. Երևան — 01/11/2021

1. **Ալբերտ Եղիազարյան** ՀՎՀՀ **67054772**
(հարկային իրավախախտումը կատարած անձի անունը, ազգանունը)

2. **Լոռու մարզ, գ. Ջրաշեն, 1փ., 15 նրբ., տ. 8/1**
(բնակության (գտնվելու վայրի) հասցեն)

3. **AR0256204**
(ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և/կամ/ հանրային ծառայությունների համարանիշը)

4. Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակը, ձեռքբերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել

ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկությունների համաձայն՝ Ձեր կողմից 28.07.2021թ.-ին ԵԱՏՄ անդամ պետությունից ՀՀ տարածք են ներմուծվել ներքոհիշյալ ապրանքները.

ՀՀ	Ապրանքի ծածկագիր	Ապրանքի կոմերցիոն նկարագրություն	Բրուտ տոն քաշ (կգ)	171-Ն-ով սահմանված չափաբաժնակ	Ինվոյսային արժեք (RUB)	Փոխարժեք	Ինվոյսային արժեք դրամով
1	3917231009	ТРУБА ВОДОСТОЧНАЯ	10	25 կգ	8,000	6.53	52,240
2	3924900009	ВОРОНКА ПЛОМБИР	1		1,400	6.53	9,142
3	3925901000	ЖЕЛОБ ВОДОСТОЧНЫЙ	2		3,200	6.53	20,896
4	3925901000	КРОНШТЕЙН ЖЕЛОБА			2,000	6.53	13,060
5	3925901000	МУФТА СОЕДИНИТЕЛЬНАЯ			800	6.53	5,224
6	3925901000	СОЕДИНИТЕЛЬ ЖЕЛОБА			840	6.53	5,485
7	3925902000	ЗАГЛУШКА ЖЕЛОБА	1		300	6.53	1,959
8	3925902000	КОЛЕНО			2,800	6.53	18,284
9	4407119300	ДОСКА ОБРЕЗНАЯ ИЗ СОСНЫ, 31м3	20,580	2մ3	279,000	6.53	1,821,870
10	4409101800	ВАГОНКА ШТИЛ СОСНА	630	25 կգ	21,600	6.53	141,048
11	5603139000	ПАРОИЗОЛЯЦИОННАЯ ПЛЕНКА	480	10 կգ	15,000	6.53	97,950
12	5603139000	ВЛАГОЗАЩИТНАЯ ПЛЕНКА ИЗОПАН В			6,000	6.53	39,180
13	5603139000	ВЛАГОЗАЩИТНАЯ ПЛЕНКА ИЗОПАН А			9,000	6.53	58,770
14	6806100008	УТЕПЛИТЕЛЬ ТИЗОЛ	630	1000 կգ	10,500	6.53	68,565
15	6806100008	УТЕПЛИТЕЛЬ РОКВЕЛ			59,520	6.53	388,666
16	7216918000	МЕТАЛЛ ПРОФИЛЬ СНЕГОЗАДЕРЖАЛЬ	50	25 կգ	24,800	6.53	161,944
17	7308905100	СЕНДВИЧ ПАНЕЛЬ	30	25 կգ	5,250	6.53	34,283

18	7325910000	ВОРОНКА ВОДОСБОРНАЯ	1		2,600	6.53	16,978
19	8428909000	ХОМУТ УНИВЕРСАЛЬНЫЙ	1	0	3.000	6.53	19,590
20	8536901000	НАКОНЕЧНИК. 4шт.	1	12 հատ՝ յուրաքանչյուր ենթադիրքից. բայց 24 հատից ոչ ավելի	1.600	6.53	10.448
21	9603100000	ВЕНИК ДЛЯ БАНИ. 25шт.	3	6 հատ՝ յուրաքանչյուր ենթադիրքից. բայց 12 հատից ոչ ավելի	2.500	6.53	16.325
		Ընդամենը	**22,420**		**459,710**		**3,001,906**

Վերոնշյալ ապրանքները գերազանցել են ՀՀ կառավարության 2020թ.-ի փետրվարի 13-ի «ՀՀ օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակներն ու ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու պարտավորության վերաբերյալ» թիվ 171-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված չափաքանակները. ուստի Դուք՝ ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 59-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ պարտավոր էիք ՀՀ կառավարության 2020թ. փետրվարի 13-ի թիվ 171-Ն որոշմամբ սահմանված չափաքանակը գերազանցող մասի համար Օրենսգրքի 77-րդ և 78-րդ հոդվածների համաձայն՝ հարկային մարմին ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիր ու վճարել արդյունքում առաջացող ավելացված արժեքի հարկը՝ մինչև ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները, որոնք որոշվում են համապատասխանաբար ապրանքը ՀՀ տարածք ներմուծելու (ՀՀ պետական սահմանը հատելու) կամ ապրանքը ՀՀ-ից արտահանելու (ՀՀ պետական սահմանը հատելու) ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից, որպիսին հանդիսանում է տվյալ օրվան նախորդող օրը հրապարակված միջին փոխարժեքը:

5. Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը և պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը

Ֆիզիկական անձ Ալբերտ Եղիազարյանի կողմից իրականացված Հ/Ը-ով նշված ներմուծման գործարքի մասով հարկային մարմին չի ներկայացվել ներմուծման հարկային հայտարարագիր և չի վճարվել ներմուծման ԱԱՀ-ի գումարը, նման պայմաններում հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի և 61-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետությունից ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում՝ ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ներմուծվող ապրանք(ներ)ի ձեռքբերման արժեքը:

Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ԱԱՀ-ն հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ 20 տոկոս դրույքաչափով:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոս դրույքաչափով (01/11/2021թ. դրությամբ).

ՀՀ	Ապրանքի ծածկագիր	Ապրանքի կոմերցիոն նկարագրություն	Հարկման բազա (ՀՀ դրամ)	Ներմուծման ԱԱՀ-ի գումար (ՀՀ դրամ)	Տույժ՝ 72 օր(ՀՀ դրամ)
9	4407119300	ДОСКА ОБРЕЗНАЯ ИЗ СОСНЫ, 31м3	1,704,330	340,866	9,817
10	4409101800	ВАГОНКА ШТИЛ СОСНА	135,451	27,090	780
16	7216918000	МЕТАЛЛ ПРОФИЛЬ СНЕГОЗАДЕРЖАЛЬ	80,972	16,194	466
17	7308905100	СЕНДВИЧ ПАНЕЛЬ	6,857	1,371	39
19	8428909000	ХОМУТ УНИВЕРСАЛЬНЫЙ	19,590	3,918	113
21	9603100000	ВЕНИК ДЛЯ БАНИ, 25шт.	12,407	2,481	71
		Ընդամենը	**1,959,606**	**391,921**	**11,287**

Այսպիսով, ֆիզիկական անձի կողմից չկատարած հարկային պարտավորությունների գումարը առ 01/11/2021թ. դրությամբ կազմում է՝ **403,209 ՀՀ դրամ**, որից հարկ՝ 391,921 ՀՀ դրամ, տույժ՝ 11,287 ՀՀ դրամ:

Հարկային պարտավորությունները հաշվարկվել են 01/11/2021 թվականի դրությամբ և ենթակա են վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

6.Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող

Մաքսային մարմինների կողմից տրամադրված տեղեկատվություն

7.Ընդամենը՝

8.Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը

ՀՀ ՊԵԿ ՀՏՌՎ վարչության ԿՈՒՎ թիվ 4 բաժնի հարկային տեսուչի ժ/թ Վիոլա Աբրահամյան